ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2022թ. հոկտեմբերի 28-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

<u>Նիստին մասնակցում էին՝</u>

<u>Կոմիտեի անդամներ</u>

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Ռուբեն Սինոյան	Կոմիտեի փոխնախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Վահան Բերակչյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 7-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **24.10.2022թ-ի թիվ N 01/10 որոշմամբ հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում Կոմիտեն լսեց Նիստին հրավիրված «Ֆուտբոլային ակումբ Ուրարտու» ՄՀԿ ներկայացուցիչներին:**

2. **20.10.2022թ-ի «Դովեղ-10»-«Բենտոնիտ-10» (13Գ-007) խաղը սկսվել է 15 րոպե ուշացումով: «Դովեղ-10» թիմի տվյալները թերի լինելու պատճառով ուշ են ներկայացվել, նախախաղային խորհրդակցությունը կայացել է նախատեսված ժամանակից 15 րոպե ուշացումով:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Դովեղ-10» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 34-րդ կետը՝ «Դովեղ ՖԱ» ՀԿ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

3. **20.10.2022թ-ի «Մուսալեռ-09»-«Օնոր-09» (14Գ-009) խաղը չի կայացել «Օնոր-09» թիմի չներկայանալու պատճառով:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Օնոր-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «Օնոր-09» թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով և «Օնոր» ՍՊԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20.000 ՀՀ դրամի չափով:

4. **20.10.2022թ-ի «Շիրակ-3-09»-«ԽՄՕՄՄ-09» (14Գ-010) խաղի ժամանակահատվածում «ԽՄՕՄՄ-09» թիմը չի ներկայացել նախախաղային խորհրդակցությանը: Խաղը մեկնարկել է 16:00-ին «ԽՄՕՄՄ-09» թիմի ուշ ներկայանալու պատճառով:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «ԽՄՕՄՄ-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 35-րդ կետը՝ «ԽՄՕՄ մ/դպ»-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

5. **18.10.2022թ-ի «Հայասա»-«Լ.Արցախ աղջիկներ» (ԿԲԽ-002) խաղը չի կայացել «Հայասա» թիմի չներկայանալու պատճառով:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Հայասա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Հայասա» թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով և «Հայասա ՖԱ» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրհիսունապատիկի՝ 150.000 ՀՀ դրամի չափով:

6. **13.10.2022թ-ի «Արփի-09»-«Սարդարապատ-09» (14C1-014) խաղի ժամանակահատվածում «Արփի-09» թիմի ֆուտբոլիստ Սուրեն Արսենի Աբրահամյանի (41936) կողմից շատ կոպիտ խախտման վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արփի-09» թիմի ֆուտբոլիստ Սուրեն Արսենի Աբրահամյանի (41936) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 14-րդ կետը՝ «Արփի-09» թիմի ֆուտբոլիստ Սուրեն Արսենի Աբրահամյանին (41936) որակազրկել 3 խաղով և «Անդրանիկ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

7. **17.10.2022թ-ի «Միկա»-«Արարատ-2» (ԱԽ-068) խաղի ժամանակահատվածում «Միկա» թիմի ֆուտբոլիստ Հմայակ Անդրանիկի Ալեքսանյանի (24297) կողմից գնդակի համար պայքարում կանոնների կոպիտ խախտման վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Միկա» թիմի ֆուտբոլիստ Հմայակ Անդրանիկի Ալեքսանյանի (24297) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 41-րդ հոդվածի 14-րդ կետը՝ «Միկա» թիմի ֆուտբոլիստ Հմայակ Անդրանիկի Ալեքսանյանին (24297) որակազրկել 3 խաղով և «ՍԱ Միկա»-ին տուգանել նցազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

8. **ՀՀ ֆուտբոլի 2022-2023թթ մրցաշրջանի մանկապատանեկան գավաթի խաղարկությունների մասնակցությունը «Վեստ Արմենիա-08» թիմը սեփական դիմումի համաձայն դադարեցրել է Մ-15 Գ խաղարկությունից:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Վեստ Արմենիա-08» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «ՖԱ Վեստ Արմենիա» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի՝ 15.000 ՀՀ դրամի չափով:

9. **ՀՀ ֆուտբոլի 2022-2023թթ մրցաշրջանի մանկապատանեկան գավաթի խաղարկությունների մասնակցությունը «Վեստ Արմենիա-13» թիմը սեփական դիմումի համաձայն դադարեցրել է Մ-10 Գ խաղարկությունից:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Վեստ Արմենիա-13» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 4-րդ կետը՝

«ՖԱ Վեստ Արմենիա» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի՝ 15.000 ՀՀ դրամի չափով:

10. **25.10.2022թ-ի «Ակադեմիա-1-11»-«Դիադին-11» (12Գ-014) խաղը տեղի չի ունեցել «Դիադին-11» թիմի չներկայանալու պատճառով:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Դիադին-11» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 46-րդ հոդվածի 5-րդ կետը՝ «Դիադին-11» թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով:

11. **25.10.2022թ-ի «Արարատ-2»-«Վեստ Արմենիա» (ԱԽ-078) խաղի ժամանակահատվածում «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստ Գրիգոր Սարգսի Հովհաննիսյանի (18463) կողմից մրցակցի նկատմամբ բռնարարքի վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստ Գրիգոր Սարգսի Հովհաննիսյանի (18463) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 41-րդ հոդվածի 16-րդ կետը՝ «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստ Գրիգոր Սարգսի Հովհաննիսյանին (18463) որակազրկել 4 խաղով և «Արարատ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրահարյուրապատիկի՝ 500.000 ՀՀ դրամի չափով:

12. **25.10.2022թ-ի «Արարատ-2»-«Վեստ Արմենիա» (ԱԽ-078) խաղի ժամանակահատվածում «Վեստ Արմենիա» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Արսենի Կարապետյանի (38490) կողմից մրցակցի նկատմամբ բռնարարքի վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Վեստ Արմենիա» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Արսենի Կարապետյանի (38490) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 41-րդ հոդվածի 16-րդ կետը՝ «Վեստ Արմենիա» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Արսենի Կարապետյանին (38490) որակազրկել 5 խաղով և «ՖԱ Վեստ Արմենիա»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրահարյուրապատիկի՝ 500.000 ՀՀ դրամի չափով:

13. **10.10.2022թ-ի «Ալաշկերտ»-«Նոա» (ՊԼ-046) խաղի ժամանակահատվաշում տոմսային համակարգի բացակայության վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ալաշկերտ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 74-րդ կետը՝ «Ալաշկերտ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով։

14. 15.10.2022թ-ի «Ուրարտու»-«Շիրակ» (ՊԼ-053) խաղի ժամանակահատվածում երկրպագուների կողմից խաղադաշտ իրեր նետելու վերաբերյալ։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 22-րդ կետը «ՖԱ Ուրարտու» ՄՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհիսունապատիկի՝ 250.000 ՀՀ դրամի չափով։

15. 17.10.2022թ-ի «Փյունիկ»-«Արարատ-Արմենիա» (ՊԼ-052) խաղի ժամանակահատվածում երկրպագուների կողմից ճայթրուկներ պայթեցնելը և անվտանգությունը չպահպանելու վերաբերյալ։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ 24-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 ՀՀ դրամի չափով։
2) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 ՀՀ դրամի չափով։

16. 21.10.2022թ-ի «Շիրակ»-«Փյունիկ» (ՊԼ-059) խաղի ժամանակահատվածում անվտանգության և աշխատակիցների թերի աշխատանք կատարելու վերաբերյալ։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետը՝ «Շիրակ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով։

17. 12.10.2022թ-ի «Սյունիք»-«Փյունիկ Ակադեմիա» (ԱԽ-063) խաղի ժամանակահատվածում երկրպագուների՝ խաղադաշտ մուտք գործելու վերաբերյալ։

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Սյունիք» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 39-րդ կետը՝ «Սյունիք ՖԱ» ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

18. 20.10.2022թ-ի «Աչաջուր Յունայթեդ-09»-«Ուտիք-09» (14Գ-012) խաղի ժամանակահատվածում «Աչաջուր Յունայթեդ-09» թիմի ֆուտբոլիստ Շահեն Դավիթի Խառատյանի (40379) կողմից մրցակցի հասցեին վիրավորական արտահայտություններ թույլ տալու վերաբերյալ:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Աչաջուր Յունայթեդ-09» թիմի ֆուտբոլիստ Շահեն Դավիթի Խառատյանի (40379) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 17-րդ կետը՝ «Աչաջուր Յունայթեդ-09» թիմի ֆուտբոլիստ Շահեն Դավիթի Խառատյանին (40379) որակազրկել 2 խաղով և «Աչաջրի գյուղապետարան»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

19. 20.10.2022թ-ի «Աչաջուր Յունայթեդ-09»-«Ուտիք-09» (14Գ-012) խաղի ժամանակահատվածում «Ուտիք-09» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Խաչատրյանի (44933)՝ մրցակցին հարվածելու վերաբերյալ:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել Ուտիք-09» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Խաչատրյանի (44933) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ Ուտիք-09» թիմի ֆուտբոլիստ Դավիթ Խաչատրյանին (44933) որակազրկել 2 խաղով և «Ուտիք հ/պետարան»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 5.000 ՀՀ դրամի չափով:

20. 20.10.2022թ-ի «Աչաջուր Յունայթեդ-09»-«Ուտիք-09» (14Գ-012) խաղի ժամանակահատվածում «Աչաջուր Յունայթեդ-09» թիմի ֆուտբոլիստ Ռուբեն Հովհաննեսի Ալիխանյանի (40391)՝ մրցակցին հարվածելու վերաբերյալ:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Աչաջուր Յունայթեդ-09» թիմի ֆուտբոլիստ Ռուբեն Հովհաննեսի Ալիխանյանի (40391) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 45-րդ հոդվածի 15-րդ կետը՝ «Աչաջուր Յունայթեդ-09» թիմի ֆուտբոլիստ Ռուբեն Հովհաննեսի Ալիխանյանին (40391) որակազրկել 2 խաղով և «Աչաջրի գյուղապետարան»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի տասնապատիկի՝ 10.000 ՀՀ դրամի չափով:

21. **20.10.2022թ-ի «Աչաջուր Յունայթեդ-09»-«Ուտիք-09» (14Գ-012) խաղի ժամանակահատվածում «Ուտիք-09» թիմի մարզչի և ֆուտբոլիստների կողմից խաղադաշտը լքելը, որի հետևանքով խաղը մնացել է անավարտ։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Ուտիք-09» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 44-րդ հոդվածի 11-րդ կետը՝ «Ուտիք-09» թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 2:7 հաշվով և «Ուտիք հ/պետարան»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկի՝ 25.000 ՀՀ դրամի չափով։

22. **09.10.2022թ-ի «Արարատ»-«Ֆյունիկ» (ՊԼ-050) խաղի ժամանակահատվածում տոմսային համակարգի բացակայության վարաբերյալ։**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

Հաստատված համարել «Արարատ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 74-րդ կետը՝ «Արարատ» ՖԱ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով։